ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1588 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1085-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չկնքած զինծառայողների), ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1085-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «շնորհված զինվորական կոչումների,» բառերը.

2) N 2 հավելվածում՝

ա. 3-րդ կետում «ըստ շնորհված զինվորական կոչումների, ուսումնառության կուրսերի և առաջադիմության» բառերը փոխարինել «ըստ ուսումնառության կուրսերի չափերի և առաջադիմության համար գործակիցների արտադրյալի» բառերով.

բ. 3-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

(դրամ)

«

Ամսական չափերը							
ըստ ուսումնառության կուրսերի					ըստ առաջադիմության համար գործակիցների		
1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	5-րդ և բարձր կուրսեր	60,00%-ից մինչև 70,99%-ը	71,00%-ից մինչև 79,99%-ը	80,00% և բարձր
15000	20000	25000	30000	35000	3	4	5

»,

գ. 4-րդ կետում «ըստ ուսումնառության երկրների և առաջադիմության» բառերը փոխարինել «ըստ ուսումնառության երկրների և առաջադիմության համար չափերի հանրագումարի» բառերով,

դ. 4-րդ կետի աղյուսակի՝ ըստ առաջադիմության ամսական չափերի սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ըստ առաջադիմության համար չափերի		
60,00%-ից մինչև 70,99%-ը	71,00%-ից մինչև 79,99%-ը	80,00% և բարձր
15000	30000	45000

»,

ե. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է կիսամյակային կամ հաջորդ կուրս փոխադրվելու գնահատման արդյունքներով՝ գնահատված կիսամյակին հաջորդող կիսամյակի ընթացքում: Առաջադիմության արդյունքների հիման վրա դրամական ապահովության համապատասխան ամսական չափը հաշվարկելու համար կուրսանտի միջին որակական գնահատականը (այսուհետ՝ ՄՈԳ) պետք է կազմի ռազմաուսումնական հաստատությունում սահմանված ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 60,00%-ից մինչև 70,99%-ը կամ 71,00%-ից

մինչև 79,99%-ը կամ 80,00% և բարձր: 60,00%-ից ցածր ՄՈԳ-ի դեպքում կուրսանտին առաջադիմության համար դրամական ապահովություն չի հաշվարկվում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև առաջադիմության համար դրամական ապահովության հաշվարկման շրջանակներում սույն որոշման գործողությունը տարածվում է 2022/2023 ուսումնական տարում հաջորդ կուրս փոխադրվելու գնահատման արդյունքների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ